ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի
Հասարակագիտական առարկաների ամբիոնի պետ,
ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
petrossianmaga@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-308

Համառոտագիր

Ռազմաքաղաքական հայացքների ձևավորումը ժամանակակից փուլում ընթանում է գլոբալ փոփոխությունների պայմաններում և ամբողջ աշխարհում կոնֆլիկտայնության մակարդ ակի աճը հանգեցրել է պաշտպանական և անվտանգային ոլորտում հետազոտությունների թվի մեծացմանը՝ էապես արժևորելով արդյունավետ վերլուծությունների և կանխատեսումների իրականացման հրամայականը: Ռազմավարական մշակույթ հայեցակարգի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ժամանակակից միջազգային հարաբերությունների բարդությամբ, դինամիզմով և անկանխատեսելիությամբ, ռազմաքաղ աքական իրավիճակի զարգացման առանձնահատկություններով, իսկ առաջացած մարտահրավերներն իրական սպառնալիք կարող են հանդիսանալ տարբեր պետությունների ազգային անվտանգության համար:

Ռազմավարական մշակույթի ուսումնասիրությունը չափազանց արդյունավետ կարող է լինել արտաքին քաղաքականության ռազմավարության և, առհասարակ, պետության գործունեության վերաբերյալ տեղեկույթ ստանալու տեսանկյունից: Ռազմավարական մշակույթի հայեցակարգի ձևա–վորման, պետության արտա քին և ներքին քաղաքականության վրա դրա ունեցած ազդեցության ուսումնասիրությունը էականորեն մեծացնում է ռազմավարական մշակույթի առանձնահատկություններով պայմանավորված ռազմավարական որոշումների կայացման վերաբերյալ կանխատեսումներ անելու հմտությունների զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով գնահատել առանձին պետությունների, տարածաշրջանների, ինչպես նաև՝ միջազգային մակարդակում ռազմական ռազմավարական, ռազմաքաղաքական իրավի–ճակը, կանխատեսել զարգացման միտումները: Բացի այդ՝ համաշխարհային քաղաքական համակարգերի կերպափոխումները, ազգային տնտեսությունների արագ և աննախադեպ զարգացումը, աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը քաղաքական որոշումների ու խնդիրների համաձայնեցման վրա պահանջում են պաշտպանական և անվտանգային ոլորտի վերաբերող հարցերի ու խնդիրների խորը և համակողմանի ուսումնասիրություն: Ընդհանուր

առմամբ, ռազմավարական մշակույթի հայեցակարգի վերլուծությունը որոշիչ դեր կարող է խաղալ ռազմավարական որոշումների կայացման գործընթացում՝ հնարավորություն ընձեռելով համակողմանի տեղեկույթ հավաքելու ներքին և արտաքին միջավայրի մասին, գնահատելու այն հնարավորություններն ու սպառնալիքները, որոնք պետք է հաշվի առնել ռազմավարական որոշումներ կայացնելիս:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ ռազմավարություն, ռազմավարական մշակույթ, անվտանգություն, պաշտպանական քաղաքակա-նություն, կանխատեսում:

THE APPLICATION OF THE STRATEGIC CULTURE CONCEPTS AS A PREREQUISITE FOR EFFECTIVE DEFENCE AND SECURITY FORECASTING

MARGARIT PETROSYAN
Vazgen Sargsyan Military Academy of the Ministry of Defence
of the Republic of Armenia,
Head of the Department of Social Sciences
Brusov State University, UNESCO Chair on Political Science and Philosophy,
PhD in Political Science, Associate Professor
petrossianmaga@gmail.com

Abstract

The formation of military-political views at the present stage occurs within the context of global changes, and the growing level of conflict worldwide has led to an increase in studies in the field of defence and security, which has significantly enhanced the relevance of implementing effective forecasts. The relevance of studying the concept of strategic culture stems from the complexity, dynamism, and unpredictability of modern international relations, as well as the peculiarities of the development of military and political situations, and the challenges that these may pose to the national security of various states.

The study of strategic culture could be highly effective in terms of obtaining information on foreign policy strategy and, in general, on the activities of the state. The study of the formation of the concept of strategic culture, its influence on the foreign and domestic policy of the state significantly increases the level of development of skills of forecasting strategic decisions taking into account the peculiarities of strategic culture, providing an opportunity to assess the military-strategic, military-political situation of individual states, regions, as well as at the international level, to forecast development trends.

In addition, the transformation of the world's political systems, the rapid and unprecedented development of national economies, and the influence of geopolitical processes on the coordination of political decisions and issues necessitate a thorough and comprehensive examination of issues and problems related to the defence and security sector. In general, analysing the concept of strategic culture can play a

crucial role in the strategic decision-making process by providing an opportunity to gather comprehensive information about the internal and external environment, as well as to assess the opportunities and threats that should be taken into account when making strategic decisions.

Keywords and phrases: Strategy, strategic culture, security, defence policy, forecasting.

ПРИМЕНЕНИЕ КОНЦЕПЦИИ СТРАТЕГИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ КАК НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ РЕАЛИЗАЦИИ ЭФФЕКТИВНОГО ПРОГНОЗИРОВАНИЯ В ОБЛАСТИ ОБОРОНЫ И БЕЗОПАСНОСТИ

МАРГАРИТ ПЕТРОСЯН

Заведующая кафедрой общественных наук,
Военная академия имени Вазгена Саргсяна МО РА,
Государственный университет имени В. Я. Брюсова,
Кафедра по политологии и философии при ЮНЕСКО, доцент,
кандидат политических наук, доцент
petrossianmaga@gmail.com

Аннотация

Формирование военно-политических взглядов на современном этапе происходит в контексте глобальных изменений, а растущий уровень конфликтности во всем мире привел к увеличению количества исследований в области обороны и безопасности, что значительно повысило актуальность реализации эффективных прогнозов. Актуальность изучения концепции стратегической культуры обусловлена сложностью, динамичностью и непредсказуемостью современных международных отношений, особенностями развития военно-политической обстановки, а возникшие вызовы могут представлять реальную угрозу национальной безопасности различных государств.

Изучение стратегической культуры может быть чрезвычайно эффективным с точки зрения получения информации о внешнеполитической стратегии и, в целом, о деятельности государства. Изучение формирования концепции стратегической культуры, ее влияния на внешнюю и внутреннюю политику государства значительно повышает уровень развития навыков прогнозирования стратегических решений с учетом особенностей стратегической культуры, дает возможность оценить военно-стратегическое, военно-политическое положение отдельных государств, регионов, а также на международном уровне спрогнозировать тенденции развития.

Кроме того, трансформация мировых политических систем, стремительное и беспрецедентное развитие национальных экономик, влияние геополитических процессов на координацию политических решений и вопросов требуют глубокого и всестороннего изучения вопросов и проблем, связанных с

сектором обороны и безопасности. В целом, анализ концепции стратегической культуры может сыграть решающую роль в процессе принятия стратегических решений, поскольку дает возможность собрать исчерпывающую информацию о внутренней и внешней среде, а также оценить возможности и угрозы, которые необходимо учитывать при принятии стратегических решений.

Ключевые слова: стратегия, стратегическая культура, безопасность, оборонная политика, прогнозирование.

Ներածություն

Միջազգային հարաբերությունների բանագավառում տեղի ունեցող փոփոխություններն ու կերպափոխումները, ուժի կիրառման վերաբերյալ տեսակետների փոփոխությունները, 21-րդ դարում պատերազմների և զինված հակամարտությունների նոր տեսակների դրսևորումների (հիբրիդային, անհամաչափ, անշփում, սուրոգատ և այլն) առաջացումը, գունավոր հեղափոխությունների ալիքը ռազմավարական մշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունները դարձնում են խիստ արդիական:

Յուրաքանչյուր պետություն միջազգային հարթակում ներկայանում է իր պատմական փորձի, համոզմունքների, աշխարհագրական և ռեսուրսային սահմանափակումների մեծ «ուղեբեռով», որն ազդում է այդ պետության վարքի վրա: Պետության արտաքին քաղաքականության շարունակականությունն ապահովվում է ավանդական ազդեցության ոլորտները պահպանելու պատմական միտումով, ինչը հնարավորություն է տալիս իշխող էլիտաների գործողությունները վերլուծելու և հավաստի կանխատեսումներ կատարելու:

Ռազմավարական մշակույթի հայեցակարգի՝ որպես այլ միջազգային դերակատարների արտաքին քաղաքականության, միջազգային քաղաքականության վերլուծության և կանխատեսման գործիքի գործնական կիրառումը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ առավելությունները՝

- Պետության քաղաքականության վրա ազդող գործոնների համախմբի առավել համընդգրկուն ըմբռնում:
- Արդյունավետ զսպման քաղաքականության վարում, որը հիմնված է այլ պետությունների մշակութային արժեքների խորը ըմբռման, ինչպես նաև ծախսերի և օգուտների արդյունավետ հարաբերակցության ընտրության վրա:
- Հստակ պատկերացումների ձևավորում այլ պետությունների քաղաքականության մեջ ռազմական ուժի գործոնի, ինչպես նաև հակառակորդին սեփական կամքի պարտադրման ուժային և ոչ ուժային միջոցների հավասարակշռության վերաբերյալ:
- Դաշնակիցների և գործընկերների հետ համագործակցային հարաբերությունների ամրապնդում:
- Տարբեր տեսակի հետախուզական տվյալների (տարբեր միջոցներով հավաքված) ճշգրտության և համարժեքության (ադեկվատության) բարձրացում:
- Հանրային դիվանագիտության արդյունավետ ռազմավարության

ընտրություն, որն ուղղված կլինի հակառակորդի քարոզչական տարբեր արշավների թուլացմանն ու արդյունավետության նվազեց-մանը և արտաքին քաղաքականության վարման գործընթացում սեփական մշակութային արժեքների արդյունավետ կիրառում:

- Արտաքին քաղաքականության բնագավառում քայլերի հնարավոր հետևանքների առավել հաջող և հստակ գնահատում:

Ռազմավարական մշակույթն ազդում է արժեքների և իդեալների ինստիտուցիոնալ համակարգերի վրա: Կառավարությունը, ՋՈՒ ղեկավար մարմինները, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելիս, միշտ առաջնորդվում են որոշակի արժեքային համակարգով և, ըստ Գրեյի, «մեր ազգային մոտեցումն է պատերազմին՝ որպես քաղաքականության գործիքի» **[1]:**

Ռազմավարական մշակույթ հասկացությունն ունի երկու բաղադրիչներ: Առաջինն ամբողջացնում է հասարակության ընդհանուր պատկերացումը շրջապատող իրականության մասին՝ հայացքներն աշխարհի, արտաքին քաղաքականության վերաբերյալ, վերաբերմունքը բանակի, պատերազմի, դաշինքների, այլ պետությունների, հին և նոր սպառնալիքների նկատմամբ: Երկրորդը կրում է ավելի օպերատիվ բնույթ: Խոսքն այն մասին է, թե հասարակության կողմից ինչն ընդունելի կամ թույլատրելի կլինի չեզոքացնելու այն սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնք կենսական նշանակություն ունեն կամ պահանջում են անմիջական միջամտություն իշխանությունների կողմից: Այս պատճառով է, որ ռազմավարական մշակույթը դառնում է ազգային անվտանգության քաղաքականությունը որոշող կարևորագույն գործոն:

Արդի փուլում ռազմավարական մշակույթի խորը, համընդգրկուն և միջդիսցիպլինար հետազոտությունը կարող է չափազանց կարևոր լինել պատերազմին և խաղաղությանը վերաբերող խնդիրների ուսումնասիրության ժամանակ **[11]:** Ռազմավարական մշակույթի հայեցակարգն օգնում է կառուցել վարքի մոդելներ այնպիսի բնագավառերում, ինչպիսիք են՝ միջազգային քաղաքականության մեջ ուժային մեթոդների կիրառությունը, արտաքին սպառնալիքների նկատմամբ զգայունությունը, քաղաքացիական և ռազմական հարաբերությունները, ռազմավարությունների մշակումը և այլն: Այս հայեցակարգի ուսումնասիրության անտեսումը կարող է իրական սպառնալիք լինել ազգային անվտանգության համար, ավելին, այս բնագավառում կատարվող հետազոտությունները պետք է շարունակական լինեն **[10]:**

Ռազմավարական մշակույթն, ըստ էության, ազգային-պետական էլիտայի՝ ռազմավարական երկարաժամկետ նախագծեր մշակելու և դրանք ծրագրային գործողությունների և տարբեր մեխանիզմների կիրառմամբ կյանքի կոչելու կարողությունն է, որի վերջնական նպատակը պետության անվտանգության, բարօրության, բարգավաճման և հզորության ապահովումն է: Այն իր մեջ ներառում է բազմաթիվ գործոններ (գործիքներ)՝ ռազմաքաղաքական, իրավական, ժողովրդագրական, էներգետիկ, տնտեսական, հոգևոր-մշակութային և այլն: Ռազմավարական մշակույթի զարգացումը ենթադրում է այս բոլոր գործոնների ներդաշնակ զարգացում, բայց յուրաքանչյուր առանձին

դեպքում վճռորոշ կարող է լինել այդ գործոններից միայն մեկը կամ մի քանիսը:

Ռազմավարական մշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունների զարգացմանը զուգընթաց պատմական փորձին տրվեց հատուկ նշանակություն, քանի որ այն դիտարկվում է որպես արտաքին աշխարհի հետ ազգի փոխհարաբերությունների պատմություն: Այն ձևավորում է ազգի աշխարհայացքը աշխարհի, իր հարևանների, արտաքին հարաբերություններում դիվանագիտության կամ ուժային մեթոդների կիրառման մասին և, որ ամենակարևոր է, հստակ պատկերացում է տալիս ազգի՝ սեփական խնդիրները լուծելու կարողությունների մասին:

Ռազմավարական մշակույթ հասկացությունը երկու կարևորագույն բաղադրիչներ ունի՝ ռազմավարություն և մշակույթ, իսկ մշակույթի՝ ազգային ռազմավարության վրա ազդեցության գաղափարն ամենևին էլ նոր չէ, դա հիշատակվել է բազմաթիվ դասական աշխատություններում՝ սկսած Թուկիդիտեսից մինչև Կլաուզևից, քանի որ ռազմավարության նպատակը ոչ միայն հակառակորդի ոչնչացումն է մարտի դաշտում, այլ նաև բարոյականության և մշակույթի ոչնչացումը:

Այս բնագավառում իրականացվող հետազոտությունները կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլերի: Առաջինը ռազմավարական մշակույթի՝ որպես հայեցակարգի ձևավորման և իմաստավորման փուլն է: Հայեցակարգն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Ջեք Շնայդերն իր «Սովետական ռազմավարական մշակույթ. սահմանափակ միջուկային օպերացիաների հետևանքները» գրքում, որում նա միջուկային պատերազմի վարման վերաբերյալ խորհրդային մտածողության օրինակով փորձել է մշակել հայեցակարգային հիմք, որը կբացատրեր, թե ինչպես են քաղաքական էլիտաների ռազմավարական մտածողության որոշակի ձևեր պայմանավորում որոշումների կայացման մեխանիզմները:

Ըստ Շնայդերի՝ «Ռազմավարական մշակույթը կարող է սահմանվել որպես համապատասխան ռազմավարության վերաբերյալ գաղափարների, դրանցով պայմանավորված հուզական վիճակների, ինչպես նաև սովորույթային վարքի այն մոդելների ամբողջություն, որոնք հանրույթի՝ ազգային ռազմավարական մշակույթի կրող անդամները ձեռք են բերում կրթության կամ դրա նմանակի միջոցով և փոխանցում միմյանց: Ռազմավարությանն առնչվող դեպքերում սովորութային վարքը դիտարկվում է առավելապես որպես գիտակցված (կոգնիտիվ) վարք» **[6]:** Իր տեսական կանխադրույթները ներկայացնելու համար Շնայդերը փորձ է արել հաստատելու քաղաքական էլիտայի վարքագծի, շարժառիթների և սահմանափակումների որոշակի մոդելներ, երբ նրանք պետք է կայացնեին ռազմավարական կարևորագույն որոշումներ (այս պարագայում զինված ուժերի կիրառում առհասարակ կամ միջուկային զենքի կիրառում):

Ըստ Շնայդերի՝ ռազմավարական մշակույթի ձևավորման գործում քաղաքական էլիտաների սոցիալականացման գործընթացը վճռորոշ դեր է կատարում և պատասխանատու է ռազմավարական մշակույթի երեք հիմնական տարրերի՝ արժեքների, նորմերի և աշխարհայացքի պահպանման

համար: Ըստ էության, սա է ռազմավարական մշակույթը. սոցիալականացման միջոցով էլիտաները և որոշումների կայացման գործընթացում ներգրավված խմբերը մարդկանց գործունեությունը կարգավորող գերակա դիրք ունեցող մշակութային նորմերի ազդեցությանն են ենթարկվում, այդ թվում նաև պետության արտաքին քաղաքականության վարման ուղղությամբ: Սոցիալականացման գործընթացում մեզ շրջապատող աշխարհում գոյություն ունեցող հիմնական հայացքները, պատկերացումները, հայեցակարգերը փոխանցվում են մի սերնդից մյուսին, քաղաքական էլիտաներին, որոշումների կայացման համար պատասխանատու խմբերին և այլն **[6]:** Ասվածից հետևում է, որ ռազմավարական մշակույթը դուրս է գալիս մեկ սերնդի սահմաններից և ձևավորում են արտաքին քաղաքականության բնագավառում վարքի երկարատև և հարաբերականորեն կայուն ավանդույթներ:

Միջազգային հարաբերությունների պրոֆեսոր Քոլին Գրեյն իր «Ռազ-մավարության ազգային ոճերը. Ամերիկայի օրինակը» գրքում ներկայացնում է արդեն դասական սահմանումը. «Ռազմավարական մշակույթն ուժի կիրառման, որոշումների կայացման վերաբերյալ մտածողության և գործողությունների ձև է, որն արմատներով հենվում է պատմական փորձի վրա և որը սահմանում է վարքի մոդելները ճգնաժամային իրավիճակներում» **[1]:**

Գրեյը ներկայացնում է ռազմավարական մշակույթը՝ որպես մի միջավայր, որտեղ քննարկվում և ընդունվում են պաշտպանական քաղաքականությանը վերաբերող որոշումներ: Բայց և այնպես, ռազմավարական մշակույթը միշտ չէ, որ սահմանում և կանխորոշում է վերջնական որոշումը, այն կարող է նաև սահմանել օրակարգը **[1]:** Դեվիդ Ջոնսն իր «Սովետական ռազմավարական մշակույթ» գրքում նշում է, որ ռազմավարական մշակույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ աշխարհագրությունը, էթնոմշակութային առանձնահատկությունները և պատմական զարգացումը **[2]:** Ըստ Ջոնսի՝ ռազմավարական մշակույթը միայն նորմերի և արժեքների համախումբ չէ, որը կարող է որոշումների կայացման հիմք հանդիսանալ, այլ որոշակի աշխարհայացք է, փիլիսոփայություն, կենսակերպ, որը ձևավորվել է ոչ թե սերունդների փորձի հիման վրա, այլ առհասարակ մարդու կենսափորձի՝ նրա զարգացման տարբեր ժամանակահատվածներում:

Ռազմավարական մշակույթի ուսումնասիրությունների երկրորդ փուլը հնարավոր դարձավ միջազգային հարաբերությունների ուսումնասի-րությունների վրա կառուցողականության (constructivism) և կառուցված-քայնության (structuralism) ազդեցության մեծացմամբ: Այս փուլում հետա-զոտողները ուշադրության առանցքում էին պահում որոշում կայացնողների վարքագծի և մշակութային ասպեկտների վրա:

Բրեդլի Կլայնը, ով հետազոտություններ է իրականացրել Ամերիկայի միջուկային ռազմավարության վերաբերյալ, անդրադառնում է այն հարցին, թե ինչպես են քաղաքական էլիտաները և պետական ինստիտուտները քաղաքականորեն «ապրանքայնացնում» (դարձնում են ապրանք) մշա-կույթը և օգտագործում այն: Ըստ Քեյնի՝ պետությունը, որը միանձնյա պատասխանատվություն ունի ռազմավարության կատարելագործման համար,

հակված է ընդլայնելու իր «տիրապետության» ոլորտն այդ պահին հասանելի բոլոր միջոցներով: Այսինքն՝ պետությունը հանդես է գալիս (միևնույն ժամանակ տիրապետում է) այնպիսի ռազմավարական մշակույթով, որը դյուրին է դարձնում իր վերահսկողությունը հասարակության և իշխանական ռեսուրսների վրա **[4]:**

Երրորդ փուլում այս ոլորտի հետազոտողները կարևորում էին խիստ մեթոդաբանության և տեսական բազայի դերը: Փաստելով, որ պատմությունն իսկապես խորը ազդեցություն է թողնում ռազմավարական մշակույթի ձևակերպման վրա, այս փուլի հեղինակները նախընտրեցին իրենց ուշադրությունը կենտրոնացնել նրա վրա, թե ինչպես է ռազմավարական մշակույթը ձևավորվում վերջին (ժամանակային առումով) պրակտիկայից և փորձից՝ միևնույն ժամանակ հիմքեր ստեղծելով կոշտ մեթոդաբանության կիրառման համար:

Ընդհանուր առմամբ, ռազմավարական մշակույթը իդեալական կերպով համադրվում է նաև սահմանափակ ռացիոնալության հասկացության հետ, այն պարզեցնում է իրականությունը, դասակարգում է նախընտրությունները, սահմանափակում՝ տարբերակները (հնարավորությունները) և ուղեցույց է տրամադրում որոշումների կայացման համար՝ տրամադրելով պատմական ընտրություններ, անալոգիաներ, փոխաբերություններ և նախադեպեր: Փաստացի, հայեցակարգը կայուն հիմքեր է ստեղծում ռազմավարական մակարդակում սցենարային պլանավորում իրականացնելու համար՝ որոշում կայացնողներին տալով հստակ այլընտրանքային մեխանիզմներ ռազմավա–րական որոշումներ կայացնելու գործընթացում:

Ա. Ջոնսոնը ռազմավարական մշակույթը սահմանում է որպես «գաղափարների մենյու, որը սահմանափակում է վարքի ընտրությունը»: Ընդհանուր առմամբ, նա մեծապես կարևորում էր ենթամշակույթների ազդեցությունը արտաքին քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա, սակայն նրա համար առանցքային է հենց գերիշխող ռազմավարական մշակույթի առկայությունը **[2]:**

Ռազմավարական մշակույթը կարելի է դիտարկել երկու եղանակով՝ նախ որպես ռազմավարական որոշումների կայացման համատեքստ, ապա նաև որպես ճանաչողական հարացույց: Ռազմավարական մշակույթի՝ որպես համատեքստի դիտարման հիմքում ընկած են երկու հարացույցներ **[1]՝**

1. Պետության՝ նախորդող ժամանակաշրջանների վարքագիծը մեծ ազդեցություն է գործում նրա միջազգային հարթակում ներկա և ապագա գործունեության վրա և այստեղ է, որ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել, թե ինչպես են գործել այդ պետությունները նախկինում:
2. Երկրորդ հիպոթեզը հիմնվում է պետությունների և ազգերի՝ իրենք իրենց վերաբերյալ պատկերացումների վրա կամ, այլ կերպ, ինքնության և ազգային բնավորության մասին, որը ենթադրում է որոշակի քաղաքականության նկատմամբ նախատրամադրվածություն **[8]:**

Ռազմավարական մշակույթը նաև խորհրդանիշների ինտեգրված

համակարգ է (լեզու, համաբանություններ, փոխաբերություններ և այլն), որոնք սահմանում են հասարակության՝ ազգային անվտանգության հայեցակարգի հիմնական սկզբունքներում արտացոլված ռազմավարական նախընտրությունները: Նա սահմանել է այդ կառուցվածքի երկու մակարդակ՝ հիմքային ենթադրույթներ և օպերատիվ մակարդակ: Հիմքային կանխա-դրույթները, ըստ էության, կազմում են աշխարհի տեսլականը, իսկ օպերատիվ մակարդակը այն հնարքներն են, որոնք պատերազմի վարման գործում կիրառում են մյուս հասարակությունները: Ռազմավարական մշակույթի ձևավորման մեխանիզմներն են՝ հաստատութենական հիշողությունը,կրթությունը, գրքերը:

Ռազմավարական մշակույթի հայեցակարգը թույլ է տալիս ստանալ հստակ կանխատեսումներ ռազմավարական ընտրության վերաբերյալ: Այն ստեղծում է երկարաժամկետ նախապատվություններ, ստեղծում է բազային պատկերացումներ ռազմավարական միջավայրի մասին, այդ թվում՝

- Պատերազմի դերը, ինպես նաև այն, թե արդյոք պատերազմն իրենից ներկայացնում է նորմա, թե շեղում:
- Թշնամին և նրա հետ կապված սպառնալիքները:
- Ռազմական ուժի կիրառման արդյունավետությունը և ուժի կիրառման արդյունքները վերահսկելու ունակությունը:
- Սպառնալիքներին ռազմավարական արձագանքման (պատասխան-ների) առավել արդյունավետ տարբերակների վերաբերյալ պատկե-րացումներ:

Է. Օժիգանովն առանձնացնում է վեց հիմնական պատճառներ, որոնք բացատրում են ռազմավարական մշակույթի հայեցակարգի կարևորությունը՝

1. Այն ոչնչացվում է էթնոցենտրիզմի ազդեցությունն այն ամենի վրա, ինչը ենթադրում է ռազմավարության պրակտիկան և տեսությունը:
2. Ռազմավարական մշակույթի ընկալումը հանդիսանում է պատերազմի հիմնական սկզբունքներից մեկի հիմնարար մասը. «Ճանաչելով թշնամուդ ճանաչում ես ինքդ քեզ»:
3. Ռազմավարական մշակույթը մեր ուշադրությունը կենտրոնացնում է պատմության կարևորության վրա, ինչը չենք կարող անտեսել, եթե ցանկանում ենք ճիշտ հարցադրումներ անել և պատկերացումներ կազմել, ինքներս մեր, ինչպես նաև այլոց (նախ և առաջ հակառակորդի) վարքի մասին:
4. Ռազմավարական մշակույթն օգնում է կոտրել արհեստական սահմանը ներքին միջավայրի (որի շրջանակներում իրականացվում է քաղաքականությունը) և անվտանգության արտաքին սահմանի միջև: Այն մեզ հիշեցնում է որոշումների կայացման մեխանիզմները, գործընթացները, ռազմական ինստիտուտները գործում են յուրահատուկ քաղաքական մշակույթներում:
5. Այն օգնում է բացատրել այն մարդկանց ակնհայտ մտածողության և վարքի իռացիոնալությունը, ովքեր սոցիալականացվել են այլ մշակութային ավանդույթների միջավայրում: Սա լավացնում է համաշխարհային քաղաքականության այլ մասնակիցների հետ շփվելու և փոխգործակցելու

կարողությունը:

6. Ռազմավարական մշակույթի փոփոխականների ճիշտ ընկալումը չափազանց կարևոր կարող է լինել սցենարների և սպառնալիքների գնահատման համար, քանի որ հնարավորություն է տալիս հասկանալու խնդիրների, իրավիճակների նրբությունները և մեծ ու փոքր հարցերի դեպքում գործողությունների ձևը: Այս ամենի գիտակցումը թույլ է տալիս նաև կանխատեսել հետևանքները երկարաժամկետ հեռանկարի համար:

Բայց և այնպես, տարբեր ենթամշակույթներ տարբեր պատկերացումներ ունեն անվտանգության վերաբերյալ: Ենթամշակույթի համոզմունքները տարբեր նարատիվների համախումբ է, որոնք ունեն ազդեցության տարբեր մակարդակներ **[7]:** Պետության ռազմավարական մշակույթը ձևավորվում է տարբեր ենթամշակույթներից, որոնցից մեկը կարող է գերակա դիրք ունենալ: Այդպիսով, ռազմավարական մշակույթն իրենից ներկայացնում է վարքի հնարավոր մոդելների համախումբ, այն, ինչ մենք կարող ենք սպասել այս կամ այն պետությունից*:*

Այսպիսով՝ ռազմավարական մշակույթը նախ և առաջ միջազգային-քաղաքական վերլուծության գործիք է և դրա կիրառումը թույլ է տալիս դասակարգել անվտանգային խնդիրները և պատրաստվել բանակցությունների այլ պետության հետ:

Եզրակացություն

Ռազմավարական մշակույթի հայեցակարգը համակարգաստեղծ գործոն է ռազմավարական կանխատեսման, պլանավորման համատեքստում, որի արդյունքները ներդրվում են պետության գործունեության տարբեր ոլորտներում՝ քաղաքական, դիվանագիտական, սոցիալ-տնտեսական, ռազմական, մշակութային-աշխարհայացքային և այլն: Հայեցակարգի հաշվառումը և կիրառումը ռազմաքաղաքական կանխատեսման և պլանավորման ընթացքում հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ միջազգային ճգնաժամերի ընթացքում պետությունների և կոալիցիաների գործողությունների շարժառիթները: Այն նաև թույլ է տալիս ինտեգրել մշակութային պատկերացումները, հավաքական պատմական հիշողությունը և դրանց ազդեցությունը ներառել միջազգային հարաբերությունների բնագավառում քաղաքականության վերլուծության մեջ: Բացի այդ՝ այս հայեցակարգի հաշվառումը բավական արդյունավետ կարող է լինել արտաքին քաղաքականության ռազմավարության և, առհասարակ, պետության գործունեության վերաբերյալ տեղեկույթ ստանալու տեսանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Grey C., Out of the Wilderness: Prime-Time for Strategic Culture. July 2006 // Comparative Strategic Cultures Curriculum: Assessing Strategic Culture as a Methodological Approach to Understanding WMD Decision-Making by States and Non-State Actors. Advanced Systems and Concepts Officer Final Report. 31 October 2006 / Ed. by Jeffrey A. Larsen. pp.1–30
2. Johnston A., Thinking About Strategic Culture, International Security, 1995, № 19.

3. Jones D., Soviet Strategic Culture, Strategic Power, 1990, pp 35–49.
4. Lantis J. Strategic Culture: From Clausewitz to Constructivism // Comparative Strategic Cultures Curriculum: Assessing Strategic Culture as a Methodological Approach to Understanding WMD Decision–Making by States and Non–State Actors. Advanced Systems and Concepts Officer Final Report. 31 October 2006 / Ed. by Jeffrey A. Larsen
5. Snyder J., The Soviet Strategic Culture: Implications for Limited Nuclear Operations, R–2154–AF (Santa Monica, CA: Rand, September 1977), pp. 8 – 38.
6. Van Dijk T., 2004. Text and Context of Parliamentary Debates, Cross–Cultural Perspectives on Parliamentary Discourse. Amsterdam: Benjamins, 2004.
7. Vinken C., Turkey's view on NATO through the scope of strategic culture theories (2009–2016), GeT MA Working Paper Series, 2018, 75 p.
8. Алексеева Т., Стратегическая культура: Эволюция концепции, Полис., 2012, № 5, сс. 130–14.
9. Ожиганов Э., Стратегическая культура: Понятие и направления исследований, Вестник РУДН, серия Политология, 2012, № 2, сс. 91–102.
10. Стратегическая культура как инструмент военно–политического анализа, https://vm.ric.mil.ru/Stati/item/259344/, (25.03.2025)